ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՆԱԽԱՏՈՆԱԿԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԵՎ ՆՈՐԱՊՍԱԿՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՇԱՏՈՒՄ

Փետրվարի 13-ին, Տյառնընդառաջի կոնի առիթով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ Արտաշատում տեղի ունեցավ նորապսակների օրհնության արարողություն: Վեհափառ Հայրապետն իր օրհնությունն ու պատգամը տվեց Արտաշատի ու շրջակա բնակավայրերի շուրջ 100 նորապսակ զույգերի՝ մաղթելով «Տիրոջ հանապազ խնամքն ու պահպանությունը նորահաստատ բոլոր ընտանիքներին»:

Արարողությանն իր մասնակցությունը բերեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԱՐՏԱՇԱՏՈՒՄ ՆՈՐԱՊՍԱԿՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ, այսօր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից եկել ենք Հայրապետական Մեր օրհնությունը բերելու նորապսակ Մեր զավակներին և ձեզ հետ միասին կոնսախմբելու Տյառնընդառաջը: Տյառնընդառաջը հիշատակությունն է 40-օրյա Մանուկ Հիսուսի՝ Տաճարի ընծայման, երբ Սիմեոն Ծերունին փութով ընդառաջ ելավ Աստուծո Միածին Որդուն և խոստովանեց իբրև Փրկիչ մարդկության:

Մեր ժողովուրդը դարերով այս կոնի հետ է կապել նորապսակ իր զավակների հավաքական ուրախությունը կոնսախմբելու արարողությունը, որպեսզի կյանքի իրենց առաջին քայլը նորապսակ հայորդիք կատարեն Տիրոջն ընդառաջ ելնելու հավատով, աստվածային պատվիրանների հավատարիմ ապրելու պատրաստակամությամբ և Տյառնընդառաջի խարույկից վառված լույսը՝ իբրև Աստվածորդու հայտնության սիրո կրակ, միշտ ջերմացնի իրենց հոգիները և նորաշեն հարկերը:

Տարիներ առաջ Արարատյան Հայրապետական թեմում Մեր Առաջնորդական Փոխանորդության շրջանում Մենք Տյառնընդառաջի կոնը հոչակեցինք նորապսակների օրհնության օր և այսօր ուրախ ենք, որ այն ավանդույթ է դարձել և նշվում է այսպիսի հանդիսավորությամբ:

Տյառնընդառաջի խորհրդի առջև Մեր հորդորն ու պատգամն է, որ անդրադառնանք, թե ամենամեծ ժառանգությունը, որ ունի մեր ժողովուրդը իր զավակներին փոխանցելու, մեր հավատքն է և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին՝ Տիրոջ փրկչական իր առաքելությամբ: Իբրև քրիստոնյաներ մենք հավատում ենք Աստծու անհուն սիրուն մարդկանց հանդեպ և Աստվածորդու աշխարհ գալուն մարդկանց փրկության համար: Այսօր Սիմեոն Ծերունու նման բոլորս հավատով

ընդառաջ գնանք Տիրոջը՝ մեր հոգիները բացենք Աստվածորդու առջև, Ով գալիս է փրկության շնորհով և օրհնությամբ, Ով գալիս է սիրով լցնելու մեր սրտերը, ապաքինությամբ զարդարելու մեր հոգիները և իբրև Տիրոջ Սուրբ Եկեղեցի՝ հաստատելու մեզ հարանց մեր հավատի ու հավատարմության մեջ:

Ընտանիքը, սիրելի նորապսակներ, նույնպես եկեղեցի է: Դուք, երիտասարդ զույգերդ, սպասավորներն եք այդ սրբազան տաճարի, կոչված ընտանեկան ձեր հարկը զարդարելու բարեպաշտությամբ, մանկանց քաղցր ճիչով ու երջանկությամբ: Ընտանիքն է հարատևության պայմանը մեր ազգի, զորությունը՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու և Հայոց պետության: Աստծո Սուրբ Տաճարի և Ընտանեկան եկեղեցու ամրությամբ ենք դարեր շարունակ ապրել ու գոյատևել, դիմակայել բազում փորձությունների և դեռը դարձել ազատ մեր Հայրենիքի: Անաղարտ ու անարատ պահենք ընտանիքի սրբությունը, մեր հոգածու խնամքի ներքո հավատով, Տիրոջ Սուրբ Ավետարանի պատգամներով ու հայրենյաց ավանդներով սնենք ու կրթենք մեր զավակներին, որ դառնան օրհնությունը մեր կյանքի և համայն մեր ժողովրդի:

Սիրելի հայորդիք, գոհունակություն է Մեզ համար, վստահաբար նաև ամենքիդ, որ նորապսակների օրհնության արարողությանը մասնակցություն է բերում նաև Հանրապետության Նախագահը, որ եկել է ուրախակից լինելու և իր շնորհավորանքներն ու բարեմաղթանքները բերելու նորապսակ հայորդիներիդ: Տյառնընդառաջի ուրախության նախատոնական այս երեկոյին, գուրեպինդ մեր ժողովրդի ապրելու և արարելու կամքով և նորապսակ Մեր զավակների հուսառատությամբ, Մեր հայացքը հառած մոտալուտ նախագահական ընտրություններին, աղոթք ենք բարձրացնում ու հայցում Երկնավոր Տիրոջից, որ ընտրությունները խաղաղ ընթացք ունենան, անխաթար պահպանվի մեր երկրի կայունությունը, և նորապսակ Մեր զավակներն ու համայն մեր ժողովուրդն ապրի բարօր ու բարգավաճ, Տիրոջ հանապազ օրհնության ներքո:

Թող Սուրբ Ավետարանը, որ նվիրում ենք այսօր նորապսակներիդ, օգնի ձեր կյանքը հանապազօր դարձնելու Տյառնընդառաջ՝ Տիրոջն ընդառաջ գնալու ճանապարհ:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ, ընդ ամենեսեսեան. ամէն»:

Վեհափառ Հայրապետը, վերադառնալով Մայր Աթոռ Ս. Էջմիածին, երեկոյան ժամը 17.00-ին եկեղեցական թափորով առաջնորդվեց Մայր Տաճար՝ հանդիսապետելու Տյառնընդառաջի նախատոնակի և անդաստանի արարողությունները:

Նախատոնակով ավետվեց Տերունական տոնի սկիզբը: Ապա կատարվեց անդաստանի արարողություն, որի ընթացքում օրհնվեցին աշխարհի չորս ծագերը: Անդաստանին հաջորդեց մոմերի օրհնության կարգը, որոնց կրակով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բակում բոցավառվեց ավանդական խարույկը՝ որպես Քրիստոսի լույսի խորհրդանիշ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Սիսիանի Կաթողիկոսական Տեղապահ Գարեգին Արքեպիսկոպոսը Սիսիանի Ս. Աստվածածին եկեղեցու մոտ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՕՐՀՆՈՒՄ Է ՆՈՐԱՊՍԱԿՆԵՐԻՆ